

Օրենք, օրենսդրություն



«Օրենքն անհրաժեշտ է ստեղծել այն պահին, երբ պետք է պաշտպանել իրավունքները եւ ոչ թե ազատությունը», - ասում է ՀՀ Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը

Պրն. նախարար, այժմ հայ ժողովրդին հուզում է երկու կարեւոր հարց. համաշխարհայնացումը եւ Եվրամիությանն անդամակցելը: Ինչպե՞ս կարելի է ազգային արժեքները պահպանել Եվրամիությունում: Համաշխարհայնացումն (գլոբալիզացիան) եւ ազգային արժեքներն առաջին հայացքից, կարծես թե, անհամատեղելի են: Այնինչ, իրականում, ոչ մի հակասություն չունեն: Իսկ ի՞նչ պետք է անենք,

որպեսզի մեր մշակութային արժեքները չկորցնենք եւ կարողանանք պահպանել, նաեւ տարածել: Կարծում եմ՝ հարցն ունի մեկ հիմնական պատասխան: Մենք պետք է պահպանենք մերը: Երբեք չի կարելի համաշխարհայնացումը եւ մշակութային արմատները, ազգայինը հակադրել միմյանց: Գլոբալիզացիան այնպիսի երեւոյթ է, որից կարելի է քաղել ամենաադրականը: Այն ընդամենը շատ թերի մեկնաբանման դեպքում է համարվում անհիմն: Ի՞նչ խնդիրներ ունենք մենք: Կարծում եմ, որ առաջին հերթին պետք է վերականգնենք մեր ազգային գաղափարախոսությունը: Ցավոք սրտի, Խորհրդային տարիների ընթացքում մենք կորցրինք այն: Գաղափարախոսությունը հարիր է պետություն ունեցող ազգերին: Եթե մենք այսօր չզարգացնենք դա, կդառնանք անդեմ ազգ: Այս խնդիրը պետք է պետական հոգածություն ունենա, բայց պետությունն ինքնին չի կարող ստեղծել ազգային գաղափարախոսություն: Դա ստեղծվում է միմիայն մտավորականության կողմից:

Չե՞ք կարծում, որ խղճի ազատության օրենքը հնացած է, եւ ընդհանրապես, երբ է անհրաժեշտ այդ օրենքն ստեղծել:

Այո՛, այդ հնացած օրենք է: Սկզբունքորեն օրենքն անհրաժեշտ է ստեղծել այն պահին, երբ պետք է պաշտպանել մարդու իրավունքները եւ ոչ թե ազատությունը: Կցանկանայի, որ տարանջատումն հստակ զգայինք՝ որտեղ է իրավունքը, որտեղ՝ ազատությունը: Ազատության տեսանկյունից եւ լուրջ խնդիրներ չեմ տեսնում օրենք ունենալու համար: Ազատությունն Աստուծուց է տրված: Պետությունը պետք է կարողանա ապահովել այնպիսի պայմաններ, որտեղ անձը կարողանա իրականացնել իր իրավունքները: Ո՞ր պահին է անհրաժեշտ օրենքը, որի նպատակը մեկն է. հստակեցնել հարաբերությունները եւ որեւէ մեկի իրավունքները, միաժամանակ, մեկ այլ կողմի պարտավորությունները: Աղանդների հետ կապված՝ նույնպես պետք է օրենքներ լինեն, որովհետեւ մենք գործ չունենք անձի հետ, այլ մի կազմակերպության, որը հավակնում է հանդես գալ քաղաքացիաիրավական հարաբերություններում եւ ունենալ իրավունքներ:

Գաղտնիք չէ, որ աղանդները ֆինանսավորվում են արտերկրից: Արդյո՞ք վտանգ չկա, որ վաղը, կազմելով զանգված, որոշակի տեղ կգրավեն մեր իշխանություններում:

Եթե մենք թույլ լինենք, իհարկե, կարող են: Եվ նույնիսկ եթե թույլ լինենք, կարող ենք ընդհանրապես իշխանություն էլ չունենալ: Խնդիրը մեր ուժեղ լինելն է: Առաջին հերթին պետք է մեզ ուժեղացնելու մասին մտածենք: Երբ սկսենք աշխատել այդ ուղղությամբ, վստահ եղեք, որ որեւէ վտանգ չի կարող սպառնալ: Իհարկե՛, դա շատ գայթակղիչ երեւոյթ է՝ ցանկացած երկրի քաղաքականության վրա ազդել՝ կուսակցությունների, կրոնական կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների միջոցով: Նման երեւոյթների ամեն օր հանդիպում ենք: Չկա՞ն կուսակցություններ, որ ֆինանսավորվում են օտար երկրների կողմից: Իհարկե՛, կան: Եվ դա շատ հայտնի գործիք է պետությունների հակամարտության ժամանակ: Խնդիրն աղանդի մասին չէ, այլ որեւէ ազդեցության մասին է: Եվ նման ազդեցության դեմ հիմնական հակազդեցությունը մեր հզորացումն է:

Պրն. նախարար, դժվար իրավիճակներում հարցեր լուծելիս, որոշումներ կայացնելիս երբեւիցե դիմե՛լ ենք Աստվածաշնչին:

Անկեղծորեն ասած՝ ոչ: Այն՝ ինչ արել եմ, արել եմ հավատով: Այդ հավատն ու ոգեշնչումն է, որ ինձ թույլ չեն տվել ամենադժվար պահերին նահանջել: Առջեւս դրված է մի լուրջ խնդիր, ներկայացնում եմ երկիրս եւ գիտեմ, որ իմ ճիշտ կամ սխալ խոսքից, ներքին կայունությունից է կախված, թե վաղը երկիրս բացարձակապես անտեղի, հնարավոր է վիթխարի գումարներ հատուցի: Շատ դժվարություններ կարող են առաջանալ ցանկացած լուրջ խնդրի լուծման հարցում, որովհետեւ եթե պարտվենք, ինձ մեղավոր կզգամ: Հենց այդ հավատն է, որ մարդուն բերում է շատ լուրջ դրական արդյունքի:

Օրենք, օրենսդրություն



«Աստված միշտ նույնն է, միշտ սիրող Հայր է եւ չի կարող երբեւէ նրա սերը պակասել մարդու հանդեպ», - ասում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Ս. Իսահակ Աբեղա Պողոսյանը

«Մի՛ դատիր, որ չդատվես», «Ինչ դատաստանով որ դատես ուրիշին, նույնով էլ դու կդատվես»: Մեկնաբանեք, խնդրե՛մ, այս արտահայտությունները:

Խոսքը Մատթ. 7. 1-3, Ղուկ. 6. 37-38

համարների մասին է: Եվ մեկնաբանությունն էլ հենց բերված մտքի շարունակությունն է: Եթե ուշադրությամբ կարդանք Ավետարանի հիշյալ համարները եւ համեմատենք Հռովմեացիներ 14 գլխի հետ, ապա կտեսնենք, որ մեզանից յուրաքանչյուրն Աստծուն հաշիվ է տալու իր արածների համար: Դրա համար Քրիստոս մեռավ ու կենդանացավ, ամենքին՝ մեռելներին ու կենդանիներին, հավասարապես տիրի: Նույնիսկ Պողոս առաքյալը, որ երբեմն շեշտում է «նախ հրեայի եւ ապա հեթանոսի» արտահայտությունը, առավել մատչելի ձևով փորձում է ներկայացնել քրիստոնեական բարոյագիտության այնպիսի նորմեր, որոնց համաձայն անհրաժեշտ է հետամուտ լինել

արդարությանը եւ խաղաղությանը: Հակառակ դեպքում ամեն բան ունայն է, եթե վերջնական արդյունքում չի ծառայելու Աստծո փառքի համար: Բոլոր մարդիկ ինչպիսի կարգավիճակ էլ ունենան, ոչ թե պետք է փորձեն դատել, երկմտել, տարակուսել, այլ պետք է Աստծուն հաճելի ձեով վերաբերվեն միմյանց, որովհետեւ «Կենդանի է Տերը» եւ, հետեւապես, ինչ դատաստանով որ դատես ուրիշին, նույնով էլ դու պիտի դատվես:

Ինչպե՞ս զանազանել բամբասանքը եւ առողջ քննադատությունը:

Այս հարցը, թերեւս, սերտորեն առնչվում է առաջինի հետ: Հակոբոս առաքյալն իր թղթի 4. 11-12 համարներում գրում է. «Եղբայրներ՝ ը, մի՛ բամբասեք միմյանց: Ով բամբասում է իր եղբորը կամ դատում իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին եւ դատում է օրենքը, իսկ եթե օրենքն էս դատում, օրենք պահող չէս, այլ դատավոր: Կա մեկ Օրենսդիր եւ մեկ Դատավոր, որ կարող է փրկել եւ կործանել. դու ո՞վ ես, որ դատում ես քո մերձավորին»: Հարցն այն չէ, թե պետք չեն օրենսգետներ ու դատավորներ, այլ այն, որ ճշմարտությանը հասնելու համար հարկավոր է ունենալ մեկ հիմնական ելակետ եւ մեկ նպատակակետ: Մեր եկեղեցու հայրերից մեկն այդ առիթով հետեւյալն է ասում. «Սրանից ավելի ի՞նչ անիրավ դատաստան, քանի որ մարդ ինչ-որ հանցանքի պատճառով դատում ու բամբասում է ընկերոջը, ինքը եւ ունենալով նույն հանցանքը, գուցե ավելի մեծ»: Ինչպե՞ս զանազանել բամբասանքը եւ առողջ քննադատությունը. պետք է ասել, որ սովորաբար առողջ քննադատությունը խորքում հստակ պատճառաբանված է եւ միտում չունի դիմացինին ցածրացնելու, ընդհակառակը, այն կոչ է զգաստության, խոհեմության, եւ վերջապես, ինքնաճանաչողության: Իսկ եթե մեկը շարունակաբար հակառակում է, տատապում է ինքն իրեն հակասելու մոլուցքով, որի արդյունքում կարող են առաջ գալ նախանձ, բամբասանք, հայհոյություն, սուտ եւ այսօրինակ ունայնություններ, արդեն իսկ ասված է, որ «իրենց պտուղներից կճանաչեք»:

Հին Ուխտի օրենքներն իրենց բնույթով դաժան են եւ ոչ մարդասիրական: Իսկ ո՞ր մնաց աստվածային սերը:

Մենք բազմիցս առիթ ենք ունեցել խոսելու այն մասին, թե Սուրբ Գիրքն առհասարակ համեմատելի չէ որեւէ այլ գրքի հետ: Աստված միշտ նույնն է, միշտ սիրող Հայր է եւ չի կարող երբեւէ նրա սերը պակասել մարդու հանդեպ: Սուրբ Գիրքը եւ, մասնավորապես, Հին Ուխտը առկայում են ասվածը հաստատող վկայություններով: Աստված կամենում է, որպեսզի բոլոր մարդիկ «փրկվեն եւ հասնեն ճշմարտության գիտությանը» (Ս Տիմոթ. 2:4): Եթե այլ հայացքի ներքո փորձենք ընթերցել Սուրբ Գիրքը, բնականաբար, կստանանք ուրիշ տպավորություն: Իրականում Հին Ուխտի օրենքներն իրենց բնույթով դաժան չեն կամ աստվածային սիրո պակաս չկա: Հին Ուխտը մեզ ցույց է տալիս, որ սա ոչ թե օրենքների կամ դեպքերի պարզ հիշատակություն է, այլ այն, որ անգիտության մեջ խարխափող մարդը ժամանակ առ ժամանակ հեռացել է Աստծուց, որ մեղքի վարձը մահ է: Իսկ աստվածային սերը մշտապես ուղեկցել է մարդկությանը մինչ այսօր. այլ հարց է, որ մենք մեր մեղքերի պատճառով հեռանում ենք Աստծուց:

Օրենքի շրջանը Հիսուսով փոխվեց Շնորհի շրջանի: Ուրեմն կարելի է Հին Ուխտը չընդունել:

Մարդկության փրկագործության ճանապարհին Հին Ուխտը կարելուծվում է, քանի որ առնչվում է Նոր Կտակարանին: Մնացածը՝ որոշ փոքրիկ վերապահումներով, Իսրայելի ազգի պատմությունն է: Հին Կտակարանն ու Նոր Կտակարանը նմանեցնում են խաչքարի, որի պատվանդանը Հին Կտակարանն է, իսկ խաչքարը՝ Նոր Կտակարանը: Ուրեմն, մենք չենք կարող Հին Ուխտը չընդունել: Ինչպես Հովհաննես Մանդակունին է ասել ժամանակին. «Մովսեսն ընդունեց Տասնաբանյա օրենքը Հոգուց... եւ Նրան վկա մարգարեները գրեցին՝ դյուրացնելով այն: Նույն Հոգով եւ առաքյալները գրեցին եւ առավել հայտնապես ճանաչեցրին: Նույն Հոգով նույն բանը վարդապետները թարգմանեցին եւ մեկը մյուսից դյուրըմբռնելի դարձրին»:

Հավատ փրկարար



«Որպես լրագրող, յուրաքանչյուր մարդու նման, ձգտում եմ կատարելության», - ասում է «Արմնյուզ» հեռուստաընկերության տնօրեն Էդուարդ Սարիբեկյանը:

Յուրաքանչյուր մարդու մեջ գենետիկորեն, թե այլ պատճառով առկա է ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկին հավատալու, պաշտելու բնական մղումն ու ցանկությունը: Ի՞նչ դեր ունի հավատքը ձեր կյանքում:

Մարդն իր կյանքում բազում ձգտումներ ունի և դրանք իրականացնելու համար փորձում է հավատալ ինչ-ինչ բաների կամ տարբեր մարդկանց: Կրոնի ծագումը, գոյատևումն ու առկայությունն այսօր մարդկանց և հասարակության կյանքում միայն դրանով է պայմանավորված: Յուրաքանչյուր

նախաձեռնություն իրականացնելիս մարդը հավատում է, որ կհասնի իր նպատակին: Ցանկացած մարդ հավատի մասին ունի իր պատկերացումը: Մեկը Փրկչի գալուստին սրտատրոփ է սպասում, մյուսն՝ ուղղակի սպասում է: Կարծում եմ, չկա մի մարդ, որ վկայի դատաստանի մասին: Ես պատկերացում էլ չունեմ, թե Ահեղ դատաստանն իրենից ինչ է ներկայացնում, որն էլ մտածելու և վախենալու տեղիք է տալիս: Ես ոչ թե հավատում, այլ ավելի շատ վախենում եմ: Վախենում եմ, որ մի օր կկորցնեմ ինձ համար շատ թանկ մարդկանց, կզրկվեմ սիրած աշխատանքից...

Ամեն ինչ անում եմ, որ այդպիսի կորուստները չունենամ: Կարծում եմ, որ գտել եմ ճիշտ ապրելու ձևը:

Վախի հիմքն անգիտությունն է: Աստծո դատաստանից վախենում են, որովհետև չգիտեն, թե ի՞նչ է լինելու ապագայում: Միգուցե պետք է ճանաչել Աստծուն:

Հայտնի նկարիչների գործեր եմ ուսումնասիրել, որոնցում պատկերված են Ահեղ դատաստանի սարսափազդու տեսարանները: Խոստովանում եմ, որ երկրային կյանքից այն կողմ ոչ մի բան չեմ պատկերացնում, ոչինչ չգիտեմ երկնայինի մասին:

Ուստի, իմ գործած սխալների համար հասանելիք պատիժը, ես առայժմ երկրային կորուստներով եմ պատկերացնում: Եթե համոզված լինեմ, որ Աստծուց չի կարելի վախենալ, այլ պիտի վախենալ Նրան կորցնելուց, ուրեմն կդադարեմ աշխարհիկ լինելուց:

Արդի ժամանակաշրջանում հեռուստատեսությունը նույնպես մարդասիրության, սիրո և այլ առաքինությունների քարոզչության միջոց է: Ինչպե՞ս եք իրականացնում հեռուստալրագրողի ձեր առաքելությունը:

Միակ պայմանը, որ կարևորում եմ լրագրողի համար այն է՝ ինչ էլ որ արվի, բոլորի համար պետք է մատչելի լինի: Որպես լրագրող, յուրաքանչյուր մարդու նման, ձգտում եմ կատարելության: Ոչ մի լրագրող լրատվության մեջ անկողմնակալ չէ: Սակայն լրատվության մատուցման մեջ գոնե պիտի անաչառ լինել:

Հավատ փրկարար



«Աստված կարող է մեզ համար հասանելի եւ իմանալի դառնալ՝ մեր անձնական ջերմությամբ», - ասում է Նուբարաշեն համայնքի հոգևոր հովիվ Տ. Բարկեն քահանա Հայրապետյանը:

«Ով որ հավատա Նրան, ամոթով չի մնալու», - ասում է Պողոս առաքյալը՝ նկատի ունենալով Հիսուս Քրիստոսին: Ի՞նչ է անհրաժեշտ այդպիսի հավատ ունենալու համար:

Հավատը մարդկանց հույսերի հաստատումն է, անտեսանելիի ապացույցը: Եթե մարդն այն համարում է իր ներքին կարողությունների, գործությունների արտահայտում, ապա սխալվում է: Այն Աստծո տված շնորհն է, որով հնարավոր է մոտենալ Նրան: Կապաղովկիայի հայրերը, նաեւ Ս. Գրիգոր Նարեկացին հիմնականում Աստծուն բնորոշում են ժխտողական ձեւերով, Իր էության մեջ՝ Անճանաչելի, Անիմանալի, Անճառելի, Անսահման... Անշուշտ, մարդն իր էությամբ չի կարող ըմբռնել անճանաչելին, բայց նաեւ Աստված կարող է մեզ համար հասանելի եւ իմանալի դառնալ՝ մեր անձնական ջերմությամբ: Հավատքով պետք է մոտենանք Նրան. սա է Աստծո կամքը: Ողջ Աստվածաշունչն Աստծո ներկայության վկայությունն է: Աստված ստեղծեց մարդուն, մարդը վայելեց Տիրոջ ներկայությունը՝ լսում էր ձայնը, նույնիսկ ոտնաձայները, գրուցում էր նրա հետ: Հետո զրկվեց ամեն ինչից: Հիսուս մարդացավ եւ հայտնվեց մարդկանց: Նրա առաքելությունը, նպատակը մարդուն փրկելն էր: Նա նախասահմանել էր, որ Իր արարվածը պիտի նստի բարձր, պատվական աթոռի վրա: Հավատում ենք, որ Հիսուս Քրիստոս մեր Փրկիչն է: Մարդը ծնվում է, ապրում, մահանում, և այս ընթացքում Աստծո ներկայությունն ավելի զգալի է դառնում: Մարդը մահանում է մարմնապես, և սկսվում է հոգու փրկագործությունը: Մարդկության փրկության դուռը Հիսուս Քրիստոսն է: Եթե այդ դռնից ներս չմտնենք, չենք տեսնի հավատի լույսը: Հավատի ճանապարհը դանդաղ են անցնում,

աստիճանաբար: Մակայն լինում են դեպքեր, երբ այն արագ է տեղի ունենում: Այդ արդեն Աստված է որոշում: Քրիստոնյաներն Աստծուց պիտի խնդրեն, որ կարողանան հավատարիմ լինել Իրեն: Երջանկություն է Աստծո հետ եւ Նրա օրհնություններով ապրելը: Մենք Տիրոջ մարմինն ենք, եւ պիտի վայելենք երկնային բարիքները: Հավատքը մեր բանականության սխրանքն է:

Իսրայելացիները չհավատացին Քրիստոսին եւ օրենքով էին ցանկանում արդարանալ: Մի՞թե օրենքի մեջ ոչ մի գործադրելի եւ փրկարար բան չկար Հիսուսի ժամանակներում:

Քառասուն օրական մանուկ Հիսուսին ընծայելու նպատակով տաճար բերեցին: Մա մովսիսական օրենքով էր, որը չանտեսվեց, քանզի Աստված էր սահմանել: Եկավ եւ Հոր կողմից դրված օրենքն իրագործեց, որպեսզի հաստատվի Նրա մարդեղությունը: Աստված ասում է. «Մի կարծեք, թե օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ՝ լրացնելու»: /Մատթ.5:17/: Մարդկությանը տվեց ամենամեծ պատվիրանը. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ գորությամբ և քո ամբողջ մտքով եւ պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» /Ղուկ.10:27/: Սրա մեջ են է՛ւ օրենքը, է՛ւ մարգարեները, է՛ւ Ավետարանը: Ոչ մի հակադրություն չկա: Եթե կատարում ես պատվիրանները, կատարում ես նաեւ օրենքը:

Հավատն առանց գործերի մեռած է: Ինչպե՞ս հասկանալ:

Հավատը պետք է չափել իր պտուղներով: Եթե կա հնարավորություն եւ ցանկություն՝ ապա մերկին պետք է հագցնես, քաղցածին՝ կերակրես... Եթե բարություն չես անում, ուրեմն ճշմարիտ չէ քո հավատը: Մարդը պետք է հետևի իր ներքին ձայնին: Մկրտվում ենք, հաղորդություն ստանում, հղկում ներքին մարդուն: Շատ զգույշ պիտի լինենք, որ չվնասենք նրան: Եթե ողջ կյանքում հրաժարվենք աշխարհայինից եւ մարմնական ցանկություններից, կարծանանանք երկնային կյանքին: Պիտի կարողանանք մեր ներքին տաճարը մաքուր պահել՝ Աստծո հետ հարաբերվելու համար: Աստծուն կարելի է հանդիպել մեր սրտերում: Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է, որ սրտով մաքուրները կարող են Իրեն տեսնել:

Շատ անգամ ենք լսում որեւէ քրիստոնյայի մասին ասվող այսպիսի խոսքեր. «Շատ լավ հավատացյալ է, ամեն օր եկեղեցի է գնում»: Կարելի՞ է մարդկանց հավատը չափել: Չէ՞ որ մարդ իր ողջ կյանքում ենթակա է փորձությունների, գայթակղությունների եւ կարող է նաեւ ուրանալ իր հավատը:

Մեր պապերն ու տատերը դեռ մանկուց առաջնորդել են մեզ եկեղեցի: Այդ տարիներից ի վեր ավելի է ամրացել շփումն Աստծո հետ: Մկրտություն, հաղորդություն, պատարագ, ծեսեր, տնօրհներքներ, պահք. դրանք են եղել մեր կյանքի ուղեկիցը: Մակայն չպիտի հպարտանանք, որովհետեւ վտանգավոր է: Իհարկե, գովելի է, երբ մարդ սկսում է համեմատվել ուրիշի հետ: Հիշենք, որ Աստված ասում է. «.. ես եմ, որ գնում եմ երիկամները և սրտերը և հատուցելու եմ ձեզ՝ յուրաքանչյուրիդ՝ ըստ ձեր գործերի» /Հայտն.2:23/: Մարդն Աստծո ստեղծած արարածն է եւ իր մեջ գանձեր ունի: Պիտի օգնել, որ հասնի ինքնաճանաչման: Հոսփիսային ծառայության ընթացքում շատ հրաշքների ենք ականատես եղել: Մարդիկ, որոնք ծանր հիվանդ են, հաղորդություն ստանալուց հետո զարմանալիորեն փոխվում են, խաղաղվում: Մի քանի օրվա մեջ տեսանելի են դառնում երկնային

օրհնությունները, պտուղներն ու ուրախությունները նրանց մեջ: Հավատը կյանքի վերջին օրերին այնպիսի ընթացք է ունենում, որ ողջ կյանքում այդպես չէր արտահայտվել: Աստված միշտ սպասում է: Նա է որոշում ամեն ինչ. հիվանդություն, անգամ մահ է տալիս՝ մարդուն փրկելու համար:

Ուխտ, ուխտագնացություն



«Այս կյանքում ամեն ինչ հավատն է որոշում», - ասում է Հայկական 2-րդ հետուստաալիքի հասարակական-քաղաքական, լրատվական ծրագրերի գծով փոխտնօրեն, քաղաքական մեկնաբան Արամ Սաֆարյանը:

Գաղտնիք չէ, որ հայ եկեղեցին դեռ 5-րդ դարից սկսած Երուսաղեմի սրբավայրերում ունի իր ուրույն դիրքն ու ազդեցությունը: Ներկայումս արդյո՞ք պահպանվում են դրանք:

Հայ առաքելական Ս. Եկեղեցին, հույն օրթոդոքս և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների հետ միասին, ավանդույթի համաձայն, համարվում է Հիսուս Քրիստոսի ծննդյան, կյանքի և մահվան սուրբ վայրերի ավագ պահապանները մեկը: Մեր եկեղեցին նախորդ երկուսի հետ ունի հավասար իրավունքներ Բեթղեհեմյան Ս.Ծննդյան, Նազարեթի, Երուսաղեմի Ս.Հարության տաճարների, Գեթսեմանի այգիների վրա և այդ մասին պիտի ողջ աշխարհն իմանա: Հայ Առաքելական Ս.Եկեղեցին դարեր առաջ է այստեղ իրավունքներ ունեցել, որոնք վերջին անգամ հաստատվել են Բրիտանական պրոտեկտորատի կողմից 1920-ական թվականների վերջին: Ես երկու անգամ եմ այցելել Երուսաղեմ: Առաջինը՝ 2000 թվականին, ՀՀ նախագահին ուղեկցող լրագրողների խմբի կազմում էի: Այդ ժամանակ ՄԱԿ-ի շրջանակներում նշվում էր Ս.Ծննդյան տունը և քրիստոնյա երկրների ղեկավարների շարքում նախագահ Ռ.Քոչարյանը և նրան ուղեկցողներն այցելեցին սուրբ վայրեր: Երկրորդ անգամ, 2004 թվականի հունիսին, մասնակցել եմ Իսրայելի արտաքին գործերի նախարարի կազմակերպած միջազգային կոնֆերանսին, որը նվիրված էր հակամարտության գոտիներում լրատվական միջոցների աշխատանքին: Եղել եմ հին Երուսաղեմի չորս մասերում, որոնցից մեկը՝ հայկական է, որտեղ գտնվում է Սուրբ Հակոբյանց վանքը: Ազգությամբ հրեա էքսկուրսավարը Երուսաղեմի պատմական սրբավայրերի մասին պատմելիս շատ հանգիստ ասում էր, որ դպտի, ասորական, հույն, կաթոլիկ, հայ եկեղեցիները մինչև այսօր վիճում են դրանց նկատմամբ ունեցած իրենց իրավունքների համար: Սակայն փաստ է, որ երեք ավագ պահապաններն ունեն արտոնյալ իրավունքներ և առ այսօր այնտեղ արարողություններ ու ծեսեր են կատարում: Իսրայելը, որպես պետություն, 50 տարեկան է, բայց քրիստոնյա աշխարհը 2000 տարի գոյություն ունի: Երուսաղեմը 5-րդ դարում 40 հայկական եկեղեցի է ունեցել: Հայ նախարարական տներն այստեղ իրենց եկեղեցիներն են կառուցել, ուստի այդ սուրբ վայրերը ժառանգել ենք մեր պապերից:

Վերջերս, երբ մեր նախագահին այցելեց Իտալիա, Միխիթարյան միաբանության հայրերի հետ եղավ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում, որը վերջին 20 տարում չի գործում: Միխիթարյան միաբանությունը թեև կաթոլիկ է, բայց բոլոր արարողություններն այնտեղ կատարվում են հայկական ծիսակարգով: Նրանք Հայաստանի նախագահին խնդրեցին օգնել, որպեսզի միաբանության վարժարանը դառնա հայ-եվրոպական մշակութային կենտրոն: Առաջարկում են, որ Հայաստանի իշխանությունը, երբ այդ կենտրոնին իր հովանավորությունը տա, նկատի ունենա նաև Հայ Առաքելական Եկեղեցու հոգևորականներին այդ կենտրոնում 1-2 տարով վերապատրաստելու հարցը: Կարծում են, դա օգտակար կլինի մեր եկեղեցուն և կնպաստի նրա հովիվների պատրաստությանը:

Երկու անգամ գործնական այցով եղել էք Երուսաղեմում: Որպես անհատ, ի՞նչ տպավորություն էք ստացել Տիրոջ հետ առնչվող սրբությունները տեսնելիս:

Մենք՝ 5 լրագրողներ, շրջում էինք սրբավայրերով և երկար փնտրեցինք այն կնոջը, որն ըստ ավանդույթի, երկու մատի միջև խաչ դաջելով՝ մահտեսիի նշան էր դնում: Նրա մահից հետո, ցավոք, այդ ավանդույթն ընդհատվել էր: Ս.Հակոբյանց վարժարանի դահլիճում հանդիպում ունեցանք Երուսաղեմի հայ համայնքի հետ, հետաքրքրվեցինք նրանց կյանքով: Մենք շատ էինք տպավորված, որովհետև շատ-շատերին հոգեպես մաքրեց Երուսաղեմ այցելելը: Ես սնտիապաշտ չեմ, բայց նշանների լեզուն հասկանում եմ: Գրիգոր Տաթևացին ասում է, եթե մենք Աստծուն հավատում ենք, երկրորդական բաներից պետք չէ վախենալ: «Հեռու պահիր մեզ երևելի և աներևույթ թշնամիներից», - այդպես ենք աղոթում: Անշուշտ, այդ աներևույթ թշնամիները գոյություն ունեն, բայց ամենազլխավորը՝ հավատն է, հույսը և սերը:

Երկրորդ այցելությունս մեծ խորհուրդ ուներ: Իմ ռուս, բուլղարացի, խորվաթ ընկերների հետ եղանք Ս.Հարության տաճարում, այնտեղ երկար շրջելու հնարավորություն ունեցանք և տեղեկացանք, որ վերջին նորոգման ներքին աշխատանքները 1960-ական թվականներին իրականացրել է երջանակահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Զարմանալի էր, թե հայ Առաքելական Ս.Եկեղեցին այսօրվա աշխարհի հզորների կողքին որքան պատշաճ մակարդակով է ներկայացված: Ես շատ հպարտ եմ, որ հնարավորություն ունեցա այցելել Երուսաղեմ, քանզի ոչ բոլորին է վիճակվում, արդի արգելքների գոյության պայմաններում լինել այնտեղ: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուրս Աստծո հետ ուխտ ունենք կապած: Ես իմ ուխտը Երուսաղեմում եմ կապել:

Հայաստանը բաց թանգարան է երկնքի ներքո: Ինչպե՞ս էք արժեվորում հայոց սրբարանները և հայ ժողովրդի հավատն առ Աստված:

Մի ռուս հոգևորական ասել է՝ Ռուսաստանի պետության ուժը ռուսական եկեղեցում աղոթք անող հավատացյալների մեջ է:

Ես էլ նույն կարծիքին եմ: Մեր ոգեղեն ուժի գաղտնիքը հայոց սրբավայրերում աղոթք անող սովորական մարդկանց մեջ է: Հավատը պահում է մեր եկեղեցին, մեր հանրության մտածողության ուժն աղոթողներն են, մնացածը՝ քաղաքագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության դասագրքերով հեշտ բացատրվող բաներ են: Իսկ հավատի ուժը բառերով բացատրել չի լինի: Այն մատերիալիստական որևէ բացատրության ենթակա չէ: Միայն Աստծո հետ հաշտ ապրող մարդը կարող է ուխտի գնալ, իսկ անհաշտները թող իրենց մեջ փնտրեն պատճառները: Այս կյանքում ամեն ինչ հավատն է որոշում:

Ուխտ, ուխտագնացություն



«Մարդն Արարչի նկատմամբ որոշակի պարտավորություններ ունի», - ասում է ԵՊՀ Աստվածաբանական ֆակուլտետի դասախոս, «Զվարթնոց» տեղեկատվական կենտրոնի տնօրեն Գևորգ սարկավազ Ղուշյանը:

«Ուխտ կնքել», «Ուխտի գնալ» արտահայտությունները շատ գործածական են մեր առօրյայում: Ի՞նչ է նշանակում ուխտ բառը:

Ուխտ բառն իր իմաստն ստացել է դեռևս Հին Կտակարանում, որ նշանակում է պայման Աստծո և մարդկանց միջև: Այնուհետև իմաստային առումով կատարելության է հասել Նոր Կտակարանում, Հիսուս

Քրիստոսի կամ խոստացյալ Փրկչի, Մեսիայի՝ Աստվածորդու այցով:

Ուխտը սովորաբար, Աստված-մարդ կամ մարդ-մարդ հարաբերություններն են, երբ մեկը պարտավորություն կամ խոստում ունի մյուսի հանդեպ: Այն որոշակի պարտականությունների շրջանակ է՝ ներքին, բարձրաձայն կամ բացահայտ պայմանավորվածությամբ: Ուխտ հասկացողությունն ավելի է իմաստավորվում մարդ-Աստված հարաբերության մեջ: Մարդն Արարչի նկատմամբ որոշակի պարտավորություններ ունի և դրանք ամբողջացնելու համար հիմնականում պայման կամ նպատակ է դնում իր առջև՝ Աստծո օրհնություններին արժանանալու համար: Հայերն ուխտ հասկացությունը շատ բազմիմաստ են ընկալել: Բազում ազգերի շարքում հայերը միակն են, որ Աստծուց տրված օրհնության շողեր ունեն՝ Միածնի իջման պահից առ այսօր: Հայաստանը բաց սրբավայր է, ուր տարբեր առիթներով այցեր, ուխտագնացություններ են կատարվում: Ուխտը, ուխտագնացությունն այցելություն է Աստծուն՝ գոհություն հայտնելու, կամ փառաբանելու, խնդրելու կամ աղաչանք անելու համար: Մեր ժողովրդի մեջ ընդունված է այն կատարել ոտքով, նույնիսկ ոտաբոբիկ, նախապես ծոմ կամ պահք պահելով: Սա առաջին դարերից սկսած բազմադարյան սովորույթ է:

Աստվածաշնչի երկու գրքերն անվանում ենք Հին և նոր Ուխտ: Ի՞նչու:

Հին Ուխտը մարդ-Աստված հարաբերությունն է, Աստծո արարչագործության պահից մինչև խոստացյալ Մեսիայի գալուստը: Նոր Ուխտը Հիսուս Քրիստոսի ծննդից հետո զարգացող մարդ-Աստված հարաբերությունն է՝ Հիսուսի գալստյան վավերացումով: Հին Ուխտն Աստծո դաշնագիրն է աստվածընտիր ազգի՝ իսրայելացիների առաջնորդների և մարգարեների հետ, որի նշանը բազմազույն ծիածանն էր: Ընտրյալ ազգը, ցավոք, դարձավ Աստված խաչող կամ սպանող մի ժողովուրդ: Հիսուս Քրիստոսի գալուստը քրիստոնյաների համար ասվածատուր պարզն է, ինչպես աստվածորդու Հարությունը: Քրիստոնեությունն ուխտի վավերացումը տեսնում է հատկապես Հարության մեջ, որն էլ մեր հավատի առանցքն է, հենասյունը: Նրա Հարությանը եթե չենք հավատում, ապա ուխտը, ուխտագնացությունը կամ ցանկացած բարեպաշտական սովորույթ դադարում է իրական արժեք լինելուց:

Ինչպիսի՞ն պետք է լինի ուխտավորը:

Ավետարանը մեզ հուշում է, որ պահք կամ ծոմ պահելիս տրտում չլինենք, որպեսզի ուրիշների համար գայթակղություն չդառնանք: Ուխտի ժամանակ պարտադիր չէ հատուկ տեսք կամ ձև ունենալ, կարևորն Աստծո նկատմամբ ունեցած պարտքի գիտակցումն է: Ուխտը միայն ճամփորդություն չէ, այլև հոգեվիճակ է, պահքի յուրատեսակ մի ձև, որովհետև մարդն ուխտ անելիս պահք պահելու ժամանակ որոշակի պայման է դնում՝ Աստծո ունեցած վերաբերմունքն իր նկատմամբ ընդգծելու համար: Ուխտ հասկացությունն այսօր մեր ազգի մեջ պահպանել է իր իրական արժեքը, որովհետև որքան էլ փորձենք ժամանակակից երևալ, այնուհանդերձ պահպանողական ենք դրական առումով: Դրա շնորհիվ է, որ այսօր հարատևում ենք, որպես ինքնուրույն ազգ: Ամեն ինչի համար պարտական ենք մեր աստվածահաստատ եկեղեցուն, որն իր ավանդապահության շնորհիվ կարողացել է ազգը պահպանել օտար բազում հարձակումներից և գաղափարախոսություններից:

Ուխտագնացությունը խորհուրդ ունի՞:

Ցավոք, այսօր երիտասարդության համար ուխտագնացությունը լուրջ ժամանցի կամ էքսկուրսիայի բնույթ է կրում: Իրականում այն ժամանց չէ, այլ ինչպես նշեցինք, որոշակի նպատակով այց է կամ պահք Աստծո հանդեպ մեր պարտականությունները հստակեցնելու համար: